

իրենց առաջնորդ կը բռնէին . ինչպէս կը ճանչնան նաև նոր գտնուած վայրե . նի ժողովուրդներ , մանաւանդ ծովեզե . րեայ բնակիչք : Բայց երբ աւելի մտա . զիր աստեղագէտներ ուրիշ համաստե . ղութիւնմ'ալ գտան աւելի հիւսիսակող . մը , (որուն աստղերը թէպէտ և նուազ պայծառ են , բայց ամեն ժամանակ գրեթէ ամենեին անփոփոխ նոյն դիր . քրն ունին երկնից երեսը) , զասիկայ ա . ռին իրք առաջնորդ և անուանեցին ֆոքր Արչ : Բայց երբոր երկինքն ամ . պամած ըլլար՝ կը զրկուէին այս առաջ . նորդէն , և տակաւին բենուացոյց չունե . նալով իրենց նաւարկութեանց մեծ մա . սը ծովափունքը քերելով կ'ընէին :

Բենուացոյցը նախ Զինացիք և Արա . բացիք գտան , Եւրոպացիք վերջիննե . րէս սորվեցան 1100ին ատենները , երբ Խաչակիրք Պալեստին անցան սուրբ եր . կիրը ազատելու , և 1300ին ատենները իտալացւոցմէ կատարելագործուելով հասարակաց գործածելի եղաւ : Եւրո . պացիք այս դիւտով յանդգնեցան մե . ծամեծ և անծանօթ ծովեր կտրել անց . նիլ : Բայց հարկադրեցան միանգամայն մեծցընել և կատարելագործել նաւաց կառուցումը :

Նաւաշինութիւնը կատարելագործու . ղաց և նորանոր անծանօթ երկիրներ գտնողաց մէջ ամենէն համբաւաւորքն եղան նախ վենետիկեցիք , ապա Բոր . դուգալցիք և Սպանիացիք չորեքտա . սաներորդ դարուն . վեշտասաներոր . դէն վերջը Հոլանտացիք , եօթնետա . սաներորդին կէսին Գալիացիք , և յե . տին ժամանակներա Անգլիացիք և Ամե . րիկացիք : Իսկ այժմեան շոգեշարժ նա . ւը կ'ոչնչացունէ ազգաց իրարու մէջ ունեցած անբաւ հեռաւորութիւնը , և է յետին ծայր կատարելագործութեան ծովագնաց ճամբորդութեան :

ՀՈՊԱՐԴ ՓԱՇԱ

ՕՍՄԱՆԵԱՆ ՊԵՏՈՒԹԵԱՆ ԸՆԴԱՌՈՒ ՆՈՎԱԳԵՏԸ

Օսմանեան պետութեան արդի ընդ . հանուր ծովագետը Հոպարդ փաշան՝ ազգաւ Անգլիացի է , և Նորֆոլքի կոմ սութեան ամենէն հին ազգատոհմե . րէն մէկու մը սերունդ : Հարիւր տարիէ . 'ի վեր Հոպարդ ազգատոհմին ամեն ե . րէց զաւակը՝ Պլքինկէմ-շըրի կոմն տիտղոսը կը կրէ և վերին խորհրդարա . նի անդամէ : Այս տիտղոսին վեցերորդ կոմնը Հոպարդ փաշային հայրն եղեր է :

Հոպարդ փաշան ծնած է 1822ին , ապրիլի 1ին , և իրբ կրտսեր որդի , կա . նուխէկի տէրութեան ծառայութեան մէջ մտաւ , ծովային զինուորազրու . թեան գրուելով , ուր քիչ ժամանակի մէջ նաւագետի աստիճան ընդունե . ցաւ :

Երբոր Ամերիկայի միացեալ Նահան . գաց քաղաքական պատերազմը սկսաւ հիւսիսային ու հարաւային գաւառնե . րուն մէջ , Հոպարդ՝ Բրիտանիոյ ծովա . յին գործոց ծառայութեան մէջ չգրտ . նուելով , այն նաւերէն մէկու մը վտան . գաւոր հրամանատարութիւնը ձեռք ա . ռաւ , որ Եւրոպայի և հարաւային դաշ . նակացաց մէջ թղթակցութիւնը և վա . ճառականութիւնը շարունակել կը ջա . նային , պաշարումը բռնաբարելով : Տաս . նըրութը անգամ Հիւսիսային լրտեսող նաւուց միջէն զալտարար սողոսկելով , հարաւայնոց նաւահանգիստները մտաւ , ինչպէս ինքը անձամբ երբեք ոչ լմբրու . նեալ մակագրաւ գրուածքի մը մէջ կը պատմէ :

1867 տարւոյն իր ազգային տէրու . թեան հաւանութեամբը Տաճկաստանի ծովային ծառայութեան մէջ մտաւ , իր անգլիական պաշտօնին աստիճանը պա . հելով : Օսմանեան ծովակալութեան ա . մեն կրթարանաց մէջ էական նորա . ձևութիւններ մտուց և ծովային պաշտօ . նէին մեծ վստահութիւնը գրաւելու . կարող եղաւ : Երբ Բարձրագոյն Դուռը . ուզեց զօրաւոր կերպով դէմ դնել և

արգելուլ այն օգնութիւնները՝ որ թու-
նաստանէն կրետէի ապստամբաց կ'ան-
ցունէին, Հոպարդ Փաշային յանձնեց
դործը:

Ծանօթ է թէ ինչպէս կրետէի ապըս-

նէր: Հոպարդ Փաշան այս նաւուն ետե-
ւէն իյնալով՝ չյաջողեցաւ բռնելու զայն.
սակայն կրցաւ Շիրայի նաւահանգստին
մէջ մշտնջենաւոր արգելական պաշա-
րել, մինչև որ թունա-Ճաճիկ խըն-



ՀՈՊԱՐԴ ՓԱՇԱ ՕՍՄԱՆԵԱՆ ՊԵՏՈՒԹԵԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԽՈՎԱՊԵՏԸ

տամբութեան ժամանակ ինոսիս յու-
նական նաւը՝ ամեն վտանգաց դիմա-
դրաւ՝ պաշարումը կոտրելով, կրետաց-
ւոց մարդ և պաշար օգնութիւն կը տա.

դիրը՝ Բարիկու ժողովքով վերջին լու-
ծումը ունեցաւ, ինչպէս որ ամենուն
ծանօթ է: